

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

6 1

6.13	Տնտեսություն 2	
6.13.1	Մակրոտնտեսական ազդեցություններ	2
	Ծրագրի գործունեության մակրոտնտեսական ազդեցություններ.....	2
6.13.2	Մասնակցությունը տեղական տնտեսությանը	7
	Տեղական Տնտեսությանը նպաստող Ծրագրի գործունեությունը.....	7
6.13.3	Տեղական գնաճ.....	10
6.13.4	Տեղական հողի վարձակալության և վճարների ավելացում.....	15
6.13.5	Մոնիտորինգ և վերահսկում.....	22
6.13.6	Եզրակացություններ	26

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 6.13.1.	Ծրագրի ընդհանուր կուտակային (ուղղակի և անուղղակի) անվանական ներդրումները	4
Աղյուսակ 6.13.2.	Մասնաբաժինը ՀՆԱ-ում և արտահանման ոլորտում Ծրագրի շահագործման փուլում.....	4
6.13.3	Ազդեցության վերլուծություն, մակրոտնտեսություն	7
Աղյուսակ 6.13.5.	Գյուղական համայնքներում ամսական աշխատավարձերի համեմատությունը ..	10
Աղյուսակ 6.13.6	Ազդեցության վերլուծություն, տեղական գնաճ.....	15
Աղյուսակ 6.13.7.	Գյուղական համայնքներին վճարվող տարեկան հողի հարկերը (2015թ.)	17
Աղյուսակ 6.13.8.	Ազդեցության վերլուծություն, հողի վարձակալություն վճարներ.....	21
Աղյուսակ 6.13.9.	Տնտեսության վրա ազդեցությունների համառոտ նկարագրությունը	21
Աղյուսակ 6.13.10.	Ազդեցությունների մեղմացման միջոցառումների՝ աղյուսակի տեսքով համառոտ նկարագրությունը	23

ՆԿԱՐՆԵՐ

Նկար 6.13.1.	Ծրագրի կողմից վճարվելիք հարկերի կառուցվածքը	6
Նկար 6.13.2	Աշխատուժի ժամանակացույց (Դեկտեմբերի 11, 2015թ.)	9
Աղյուսակ 6.13.3	Լիդիան ընկերության կողմից վճարված Գորայքի հողի հարկը.....	18
Աղյուսակ 6.13.4.	Լիդիան ընկերության կողմից վճարված Սարավանի հողի հարկը (ԱՄՆ դոլար).....	18
Աղյուսակ 6.13.5.	Լիդիան ընկերության կողմից վճարված Գնդեվազի հողի հարկը (ԱՄՆ դոլար).....	18

6.13 Տնտեսություն

Ամուլսարի Ծրագրի դրական ազդեցությունը մակրոտնտեսության վրա զգալի կլինի, սակայն այն կարող է նաև տնտեսական ազդեցություններ ունենալ տեղական մակարդակով: Այս բաժնում գնահատվում են չորս տարբեր տնտեսական ազդեցություններ.

- Մակրոտնտեսական ազդեցություններ, մասնակցություն երկրի ՀՆԱ-ում և արտահանման ոլորտում, ինչպես նաև հասարակության եկամուտների ոլորտում;
- Մասնակցություն տեղական տնտեսությանը (Ջերմուկ և շրջակա տարածքներ);
- Գնաճ տեղական մակարդակով
- Հողի հարկի վճարումներ տեղական մակարդակով

6.13.1 Մակրոտնտեսական ազդեցություններ

Ծրագրի գործունեության մակրոտնտեսական ազդեցություններ

Ինչպես նշվել է ԲՍԱԳ-ում, Ծրագիրը ներառում է Տիգրանես, Արտավազդես և Էրատո հանքավայրերի հանքարդյունահանումը: 2014թ.-ին Avag Solutions հայկական խորհրդատվական ընկերության տնտեսագետների կողմից ձեռնարկվել է ընդհանուր տնտեսական հավասարակշռության մոդել՝ երկրի տնտեսության վրա Ծրագրի ուղղակի և անուղղակի ազդեցությունները¹ պարզելու նպատակով: Avag Solutions ընկերությունը գնահատել է Ծրագիրը այնպես ինչպես նկարագրված է ԲՍԱԳ v9f –ում: Մինչդեռ Ծրագրի նկարագիրը այս ԲՍԱԳ-ում (v10) տարբերվում է որոշ առումներով ԲՍԱԳ v9f-ից (օրինակ՝ ստանձնած ոսկու գինը մեկ ունցիայի դիմաց փոփոխվել է USD \$ 1,250 դոլարից \$ 1,150 դոլար), 2014թ.-ի վերլուծությունը ներառվել է այս ԲՍԱԳ-ի մեջ, քանի որ այն նշում է Ծրագրի մակրոտնտեսական ներդրումը:

Ուղղակի տնտեսական ազդեցությունները վերաբերում են Ծրագրի անմիջական հետևանքներին, մինչև անուղղակի հետևանքները կապված են Ծրագրի իրականացման արդյունքում Հայաստանի տնտեսության այլ ճյուղերի արտադրադրանքի բարձրացման հետ: Մասնավորապես, սոցիալական հաշվապահական մատրիցայի օգնությամբ մանրամասն նկարագրված միջ-ոլորտային հարաբերությունները լրացվել են Հայաստանի զարգացման ռազմավարության նորացված կանխատեսումներով: Ծրագրի իրականացման հետևանքով առաջացող մակրոտնտեսական ազդեցությունը գնահատվել է երկու բաղադրիչ փուլով,

¹ Անուղղակի կամ առաջացրած ազդեցությունները դրանք Ծրագրի գործունեության լրացուցիչ արդյունքներն են, այն դեպքերում, երբ ծախսերի աճը բազմապատկական բնույթ է ունենում

շինարարության (ներդրումների) փուլ և հանքարդյունաբերության (շահագործման) փուլ:

Այդ մոդելները հիմք են ընդունում մեկ ունցիայի համար 1250 դոլար ոսկու ակնկալվող գինը և 11 տարվա հանքի շահագործման ընթացքում մոտ 2.2 միլիոն ունցիա միջազգայնորեն հաստատված *պաշարներով* կոպիտ նախահաշվարկը: Ընդերքօգտագործման վճարների և հարկերի նախահաշիվները զգալիորեն կավելանային, եթե հնարավոր լիներ հանել ընթացիկ որոշ կամ ամբողջ *պաշարները*, որը նախնական հաշվարկներով կազմում է 3.03 միլիոն ունցիա²:

Հնարավոր մակրոտնտեսական ազդեցությունները

Բացարձակ ներդրումներ

2014թ.ի նմուշում Լիդիան Ինթերնեշնլ ընկերությունը պարտավորվել էր Ծրագրի իրականացման համար կատարել ավելի քան 426 միլիոն դոլարի³ չափով կապիտալ ներդրում (Հատուկ ծանոթագրություն. ըստ FUUQ Vv10-ի նախատեսվում է \$370 մլն դոլարի կապիտալ ներդրում) առաջին երկու տարիների ընթացքում շինարարության և սարքավորումների տեսքով: Ակնկալվում էր, որ Ծրագրի իրականացման ողջ ընթացքում ընկերությունը 485 միլիոն դոլարի չափով ներդրում կանի պետական բյուջե՝ հարկերի (ներառյալ աշխատավարձից գանձվող եկամտահարկը և վճարված շահաբաժինների հարկը, ինչպես նաև շինարարության փուլում վճարած հարկերը) և ընդերքօգտագործման վճարների միջոցով: Աշխատողների աշխատավարձերը Ծրագրի իրականացման ողջ ընթացքում նախնական հաշվարկներով ակնկալվում էր, որ կկազմեին մոտ 230 միլիոն դոլար՝ ներառյալ շինարարության ընթացքում վճարված աշխատավարձերը: Ակնկալվում էր, որ Ծրագիրը կավելացնի Հայաստանի եկամուտները արտահանումից տարեկան միջինը մոտ 285 միլիոն դոլարի չափով շահագործման տարիների ընթացքում: Աղյուսակ 6.13.1-ը ամփոփում է Ծրագրի ընդհանուր կուտակային ուղղակի և անուղղակի ներդրումները, ինչպես նկարագրված էր 2014թ, անվանական առումով:

² Ոսկու *պաշարների* հանումը հաստատված և տեխնիկապես ու տնտեսապես իրատեսական է: *Պաշարները* հաստատ ապացուցված չեն՝ ելնելով ընթացիկ տեխնիկական ուսումնասիրություններից, սակայն հնարավոր են:

³ Այս թիվը կարող է փոփոխության ենթարկվել ինժեներական նախագծի առաջընթացին համընթաց

Աղյուսակ 6.13.1. Ծրագրի ընդհանուր կուտակային (ուղղակի և անուղղակի) անվանական ներդրումները (2014թ. Հիմնական տարբերակ, 2016թ.-ի նախագծային փոփոխություններին համապատասխանեցված չէ)				
	Նկարագիր	Ընդամենը (մլն դոլար)	Ուղղակի (մլն դոլար)	Անուղղակի (մլն դոլար)
1	Կապիտալ ներդրումներ	426.1	426.1	--
2	Հարկեր	584.4	485.4	99.1
3	Ավելացված արժեք (ՀՆԱ)	1563.8	1192.2	371.6
4	Արտահանում	2688.0	2575.4	112.5

Մասնաբաժինը ՀՆԱ-ում և արտահանման ոլորտում

Շինարարության փուլ

Ըստ Avag Solutions ընկերության 2014թ.-ի հաշվարկների, Ծրագրի շինարարության փուլը հավանական էր, որ ավելացներ Հայաստանի շինարարության ոլորտի արտադրությունը տարեկան մոտ 92 մլն դոլարով 2015թ-ից մինչև 2016թ: Շինարարության տարիների ընթացքում ընդհանուր ՀՆԱ-ում համապատասխան ամենամյա մասնաբաժինը գնահատվել էր 0.62%: Շինարարության ավելացած արտադրության բազմապատկիչ ազդեցությունը ՀՆԱ-ի վրա գնահատվել էր 1.29:

Շահագործման փուլ

Ծրագրի առաջնային մակրոտնտեսական հետևանքները առաջ են գալիս շահագործման ժամանակահատվածում: Պետք է նշել, որ շահագործման գործողությունների ինտենսիվությունը համաչափ չէր բաշխված Ծրագրի կենսափուլի ընթացքում: Շահագործման պլանը, ինչպես սահմանված էր 2014թ, նախատեսում էր ավելի բարձր մաքուր ֆինանսական հոսքեր 2017-2020թթ և բարձր շահույթ շահագործման ժամանակահատվածի երկրորդ կեսին: Սա արտացոլված էր ՀՆԱ-ում, ինչպես նաև արտահանման ոլորտում մասնաբաժնի բացարձակ և հարաբերական թվերով՝ Աղյուսակ 6.2-ում: Ուղղակի ներդրումները 2017-2020թթ միայն ՀՆԱ-ի գծով կկազմեն զրեթե 1% տարեկան, իսկ Հայաստանից արտահանման ոլորտում՝ մոտ 8%: Հանքարդյունաբերության բազմապատկիչը ավելի բարձր է, քան շինարարության բազմապատկիչը (1.32-ը 1.29-ի հարաբերակցությամբ): Սա նշանակում է, որ ՀՆԱ-ում մասնակցության/մասնաբաժնի յուրաքանչյուր միավորի լրացուցիչ դրական ազդեցությունը կկազմի 0.32 միավոր:

Աղյուսակ 6.13.2. Մասնաբաժինը ՀՆԱ-ում և արտահանման ոլորտում Ծրագրի շահագործման փուլում

		2017-2020թթ		2021թ և դրանից հետո	
		(տարեկան միջինը)		(տարեկան միջինը)	
		Ընդամենը %	Միլիոն դոլար	Ընդամենը %	Միլիոն դոլար
1	Բացարձակ մասնաբաժինը ՀՆԱ-ում	1.2%	156.5	1.1%	160.2
1ա	Ուղղակի	0.9%	118.8	0.8%	121.7
1բ	Անուղղակի	0.3%	37.6	0.3%	38.5
2	Բացարձակ մասնաբաժինը արտահանման ոլորտում	7.8%	337.2	5.2%	269.1
2ա	Ուղղակի	7.5%	324.3	4.9%	255.6
2բ	Անուղղակի	0.3%	12.9	0.3%	13.5


Մասնաբաժինը հարկերում

Շինարարության փուլ

Շինարարության փուլի երկու տարիների ընթացքում ստացված ընդհանուր հարկային եկամուտները (այդ թվում, տնտեսության բոլոր ճյուղերում արտադրանքի ընդլայնման հետևանքով առաջացած/անուղղակի հարկերը) գնահատվում էր 16 մլն դոլար 2014թ, ինչը կազմում էր ընդհանուր հարկային եկամուտների մոտ 0.6% -ը:

Շահագործման փուլ

Միջին հաշվարկով տարեկան հարկերը (այդ թվում, աշխատողների եկամտահարկը և հարկը շահութաբաժնից) և կառավարությանը վճարվող ընդերքօգտագործման վճարները կկազմեին շուրջ 50 միլիոն դոլար, ըստ 2014թ հաշվարկների: Ակնկալվում էր, որ Ծրագիրը կընդգրկվի երկրի հարկատուների առարին հնգյակում: Ընդերքօգտագործման վճարները Ծրագրի կողմից կառավարությանը վճարվող հարկերի մեծ մասն են կազմել: Նկար 6.13.1-ում պատկերված է Ծրագրի շահագործման ընթացքում վճարվելիք հարկերի կառուցվածքը:



Նկար 6.13.1. Ծրագրի կողմից վճարվելիք հարկերի կառուցվածքը

Հարկ է նշել, որ վճարված հարկերը շատ զգայուն են ոսկու գնի փոփոխությունների հանդեպ: Օրինակ՝ ոսկու գնի աճը 500 ԱՄՆ դոլարով գրեթե կկրկնապատկեին հարկային մուտքերը, սակայն ոսկու գնի նվազումը 500 ԱՄՆ դոլարով կկրճատեր հարկային եկամուտները 80%-ով:

Բացարձակ ներդրումները, ՀՆԱ-ում մասնաբաժինը, և ընդերքօգտագործման վճարները և հարկերը համարվում են դրական ազդեցություններ՝ չնայած այդ ազդեցությունների ընդհանուր էականությունը նվազում է ոչ թափանցիկ վճարումների և կոռուպցիայի հնարավոր ռիսկից, որ կարող է առաջանալ խոշոր վճարումների ոչ պատշաճ վերահսկման և հաշվետվության հետևանքով: Սակայն այդ վճարները նույնպես կդադարեցվեն, երբ հանքը փակվի՝ այդպիսով այդ դրական ազդեցությունները դարձնելով ժամանակավոր:

Մակրոտնտեսական ազդեցությունների մեղմացման/իրավիճակի բարելավման միջոցառումներ

Ծրագրի տնտեսական օգուտների կառավարումը հիմնականում Հայաստանի Հանրապետության պատասխանատվությունն է: Չնայած Հայաստանը ներկայում Արդյունահանող արդյունաբերությունների թափանցիկության նախաձեռնության (ԱԱԹՆ) թեկնածու երկիր չէ, Լիդիան ընկերությունը բոլոր հարկերի և պետական վճարումների վերաբերյալ հաշվետվության առումով կկատարի ՄՖԿ-ի պահանջները: Այդ

հաշվետվողականությունը ներառված է ԱԱԹՆ-ի շրջանակներում և ՄՖԿ-ի կողմից պահանջվում է արդյունահանող արդյունաբերության նոր ծրագրերից:

Ընդերքօգտագործման վճարների և հարկերի լիակատար հաշվետվության գործընթացը հիմնված կլինի Ծրագրի կողմից արդեն ընդունված մոտեցման վրա, որի համաձայն տարեկան կտրվածքով հաշվետվություն է տրամադրվում յուրաքանչյուր գյուղական համայնքին վճարվող հողի հարկերի չափի վերաբերյալ (տես Բաժին 6.13.3): Լիդիան ընկերության կորպորատիվ կառավարման պարտավորությունների վերաբերյալ ամբողջական մանրամասն տեղեկություններն առկա են ընկերության կայքէջում:

Ծրագիրը նպատակ ունի նաև նպաստել Հայաստանում տնտեսական աճին իր տեղական գնումների և աշխատակիցների համալրման քաղաքականությունների միջոցով:

Մնացորդային մակրոտնտեսական ազդեցություններ

6.13.3 Ազդեցության վերլուծություն, մակրոտնտեսություն						
Ենթադաս	Ուղղություն	Ուժգնություն	Մակարդակ	Տևողություն	Ազդեցություն (առաջ)	Ազդեցություն (հետո)
Մակրոտնտեսություն	Դրական	Խոշոր	Ազգային	Միջնաժամկետ	Մեղմ (դրական)	Խոշոր (դրական)

6.13.2 Մասնակցությունը տեղական տնտեսությանը

Տեղական Տնտեսությանը նպաստող Ծրագրի գործունեությունը

Ծրագիրը կնպաստի և Ջերմուկի տնտեսությանը թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի: Նախնական ուղղակի մասնակցությունը կլինի շինարարության փուլում մինչ 370 հյուրանոցային սենյակների զբաղեցումը, և բնակարանների վարձակալությունը մոտ 210 ընտանիքի համար և 250 անձի տեղավորումը հյուրանոցում շահագործման փուլում: Այս ուղղակի շահույթը հիմնականում կստանան հյուրանոցների տերերը և բնակարանները վարձակալության հանձնող անձիք և ընտանիքները: Անուղղակի օգուտները կներառեն. Ծրագրի տարածքում կանխիկ եկամտի աճող մակարդակով պայմանավորված Ջերմուկի ներսում ծախսերի աճ; ապրանքների և ծառայությունների պահանջարկի աճ են, ինչը կարող է նպաստել նոր բիզնեսների զարգացմանը հանրարդյունահանման և շահագործման ընթացքում; Ջերմուկում աշխատատեղերի թվի աճ՝ կապված հյուրանոցում բնակվողների սպասարկման հետ:


Ծրագիրը նաև կնպաստի տեղական համայնքների տնտեսության զարգացմանը՝ ապահովելով մոտավորապես 380 - 390 տեղաբնակ աշխատողների հավաքագրումը և նրանց համար հմտությունների կատարելագործման դասընթացների կազմակերպումը Ծրագրի կենսափուլի համար: Ակնկալվում է նաև, որ կավելանան տեղական ապրանքների և ծառայությունների գնումները, օրինակ՝ թարմ մրգերի և բանջարեղենի մատակարարումը բնակեցման ճամբարում, ինչպես նաև Ջերմուկի հյուրանոցում տեղավորված բանվորների համար: Ջերմուկում հնարավոր ազդեցություններից բացի, անուղղակի ծախսերը կարող են հանգեցնել այլ ապրանքների, օրինակ՝ Սարալանջի և Սարավանի շուկայական կրպակներից գնումների հետ կապված ծախսերի աճի: Դա կարող է շրջակա գյուղերի ձեռնարկությունների համար հնարավորություն ստեղծել աջակցել հանքավայրի շահագործմանը:

Տեղական տնտեսության վրա հնարավոր ազդեցությունները

InterSocial- ընկերությունն ավարտել է Ջերմուկի վրա աշխատուժի բնակեցման հետ կապված ազդեցությունների գնահատումը: Այն ընդգկվել է սույն ԲՄՍԳ-ի 6.21 բաժնում:

Ջերմուկը հիմնականում առողջարանային զբոսաշրջության քաղաք է: Զբոսաշրջությունը Ջերմուկում առավելապես սեզոնային է, որտեղ ամռանը և Նոր տարվա նախօրեին/մի շաբաթ առաջ հյուրանոցները աշխատում են լրիվ կամ գրեթե լրիվ հզորությամբ, իսկ մնացած տարվա զբաղվածությունը շուրջ 20% է: Ջեռուցման բացակայության արդյունքում հյուրանոցներից մեկը (Գլաձոր) փակվում է ձմռան սեզոնին: Ջերմուկի տնտեսությունը թերի է զարգանում: Հյուրանոցային օպերատորները փոփոխություններ են գրանցում զբոսաշրջիկության բնագավառում կապված Ռուսաստանում ճգնաժամի հետ (բացասական ազդեցություն) և սոցիալական փաթեթների հետ (դրական ազդեցություն):

Ծրագրի շինարարական բնակեցման պահանջները տարբերվում են աշխատուժի ժամանակացույցից (տես՝ Նկար 6.13.2 շինարարության փուլի համար): Աշխատողների բնակեցման գնահատումը (համառոտ ներկայացված է Գլուխ 6.21-ում) ենթադրում է, որ շինարարության փուլում Ջերմուկում գրոյից- 370 մահճակալի վարձակալման կարիք կարող է լինել: Ամենամեծ թվով մահճակալի կարիք կլինի 2017թ. մայիսին: Հաշվի առնելով 85 ԱՄՆ դոլար մի գիշերվա համար սենյակի վարձույթի միջին դրույքաչափը, Ջերմուկի տնտեսության շահույթը միայն սենյակների վարձույթից զգալիորեն կաճի: Բացի այդ, Ջերմուկի տնտեսությունը շահույթ կունենա նաև սննդի և հավելյալ ծառայությունների համար վճարներից:



Նկար 6.13.2 Աշխատուժի ժամանակացույց (Ռեկտեմբերի 11, 2015թ.)

Զբոսաշրջության համար անբարենպաստ ժամանակահատվածներում (հոկտեմբեր-դեկտեմբեր և հունվար-ապրիլ/մայիս) Ծրագրի կողմից սենյակների վարձակալությունը դժվար թե փոխարինի ակտիվ զբոսաշրջությունը: Մակայն, զբոսաշրջության պիկ սեզոնին, ակնկալվում է, որ մինչև 370 սենյակի վարձակալությունը որոշակի չափով կփոխարինի զբոսաշրջիկային ակտիվությանը՝ արդյունավետորեն փոխարինելով զբոսաշրջիկների “դուլարները” Ծրագրի “դուլարներով”: Այսպիսով, Ծրագրի տնտեսական աջակցությունը Ջերմուկին սենյակների վարձակալության միջոցով կարող է համարվել նոր ներդրում միայն այն դեպքերում, երբ այն չի փոխարինում զբոսաշրջիկներից ստացվող շահույթը:

Շահագործման փուլում Ծրագիրը կրկին ներդրում կանի Ջերմուկի տնտեսությանը հյուրանոցային սենյակներ վարձակալելով: Բացի այդ, մի շարք ընտանիքներ կտեղափոխվեն այնտեղ շահագործման աշխատանքների ժամանակահատվածում: Անկասկած, 12-13 տարիների ընթացքում հյուրանոցային սենյակների վարձակալությունից ստացվող կայուն օգուտը մեծ տնտեսական ազդեցություն կունենա ազդակիր հյուրանոցների սեփականատերերի վրա, միաժամանակ տարածվելով մնացած տնտեսության վրա անմիջական (օրինակ՝ սննդի եւ լվացքատան ծառայությունների) և անուղղակի աջակցության ծառայությունների արդյունքում:

Ակնկալվում է, որ շրջակա համայնքները օգուտ կքաղեն անուղղակի տնտեսական ազդեցություններից կապված Ջերմուկում մատակարարվող բնակելի տարածքներին և շինարարության փուլում բնակեցման ճամբարին սնունդի մատակարարման և ծառայությունների մատուցման հետ: Այս համայնքները նաև կկարողանան օգտվել մոտ 400

նոր աշխատատեղերից, որոնք կստեղծվեն տարածքում: Այդ ազդեցությունների սոցիալական հետևանքները ներկայացված են Գլուխ 6.14-ում:

Մեղմացման միջոցառումներ/ Հնարավորություններ տեղական տնտեսություն ներդրման համար

Հիմնվելով աշխատողների բնակեցման հետ կապված հնարավոր ազդեցությունների (շահավետ և բացասական) վրա, առանձին ուսումնասիրություն է իրականացվել 2016թ.-ի առաջին եռամսյակում: Նպատակն էր՝ տեղեկացնել ազդեցությունների գնահատման, մեղմացուցիչ միջոցառումների և աշխատողների բնակեցման տարածքների կառավարման պլանի պահանջների վերաբերյալ: Այդ ուսումնասիրության արդյունքները, այդ թվում՝ մի շարք մեղմացնող միջոցառումներ, ներկայացված են 6.21 բաժնում և Հավելված 6.24-ում (կառավարման պլան):

Մնացորդային ազդեցություն տեղական տնտեսություն վրա

Մնացորդային ազդեցությունները վերլուծվել և ներկայացվել են 6.21-բաժնում:

6.13.3 Տեղական գնաճ

Տեղական գնաճի վրա ազդեցություն ունեցող Ծրագրի գործողությունները

Ծրագիրը կստեղծի աշխատանքի հնարավորություններ. շինարարության ընթացքում առավելագույնը 1300 աշխատատեղ, իսկ շահագործման փուլում՝ 657: Նշված աշխատողները կստանան էականորեն ավելի բարձր աշխատավարձեր, քան ներկա պայմաններում ստանում են մոտակա համայնքներում աշխատողները: Աշխատավարձերի համեմատական տվյալները ներկայացված են Աղյուսակ 6.13.5-ում:

Աղյուսակ 6.13.4. Գյուղական համայնքներում ամսական աշխատավարձերի համեմատությունը

Հայկական աշխատուժի դասակարգում	Ամսական աշխատավարձը (ՀՀԴ)
Ուսուցիչ (դաս)	35 000-100 000 ՀՀԴ
Գրադարանավար	30 000-40 000 ՀՀԴ
Հանքային ջրերի գործարանի աշխատողներ	55 000-110 000 ՀՀԴ
Ամուլսարի հանքի օպերատոր (դաս)	120 000- 420 000 ՀՀԴ
Ամուլսարի գործարանի օպերատոր (դաս)	80 000 -200 000 ՀՀԴ
Ամուլսարի կրտսեր մասնագետ (դաս)	80,000- 200,000
Ամուլսարի ավագ մասնագետ (դաս)	115 000 – 520 000 ՀՀԴ

Տեղական մակարդակով գնումներ նույնպես կլինեն, ինչը տեղական կտրվածքով գնաճի վրա ազդելու ներուժ ունի, եթե պատշաճ կերպով չկառավարվի:

Տեղական գնաճի վրա հնարավոր ազդեցությունները

Տեղական գնաճի հետևանքները հիմնականում կարող են ազդել երկու տնտեսական ոլորտի վրա. ապրանքների և ծառայությունների արժեքները տեղական համայնքներում և բնակեցման արժեքը: Այդ ազդեցությունների մակարդակը կախված է Ծրագրի գնումների քաղաքականությունից, աշխատողների թվաքանակից, որոնք, ամենայն հավանականությամբ, ձեռք կբերեն և կօգտագործեն տեղական ապրանքները, և Ծրագրի կողմից որդեգրված բնակեցման մոտեցումից:

Ծրագիրը նախատեսում է ձեռք բերել տեղական ապրանքներ, այնտեղ, որտեղ դա հնարավոր է, սակայն, տեղական արտադրանքի առկայությունը և առկա արտադրանքի տեսականին կսահմանափակեն տեղական գնումների մակարդակը: Նախատեսվում է, որ տեղական գնումները կկենտրոնացվեն այն արտադրանքի վրա, որը հնարավոր է օգտագործել որպես սնունդ շինարարության աշխատողների ճամբարում և Ջերմուկի հյուրանոցում, և այլ պարագաների վրա, որոնք հիմնականում կապված են տարածքում աշխատուժի ծառայությունների հետ:

Ինչպես նկարագրված է Գլուխ 3-ում, Ծրագիրը ակնկալում է ունենալ առավելագույնը 1300 շինարար, և 657 մարդ շահագործման աշխատանքների համար: Շինարարության ընթացքում ակնկալվում է, որ աշխատուժի 30% - ը կհամալրվի տեղի բնակչությունից, ինչը թույլ կտա նրանց մնալ ապրել իրենց տներում և աշխատել Ծրագրի համար: Մնացած (առավելագույնը) 920 շինարարների համար ժամանակավոր ճամբար կկառուցվի աշխատողների որոշ մասին կսպասարկելու համար: Ճամբարի մեծությունը դեռ պետք է որոշվի, սակայն այն կսպասարկի 550-920 աշխատող (տես ավելին Գլուխ 6.21-ում): Եթե որոշվի կառուցել 920-ից քիչ աշխատողի համար նախատեսված ճամբար, մնացած շինարարները կբնակեցվեն Ջերմուկի հյուրանոցում: Նախատեսվում է, որ ճամբարը կգործի որպես փակ ճամբար, սահմանափակելով շինարարների և տեղի համայնքների շփումը: Սահմանափակ շփումը նաև կսահմանափակի այդ աշխատողների գնումների մակարդակը տեղի համայնքներում: Սակայն, քանի որ աշխատողները կլինեն նաև Ջերմուկի և մոտակա համայնքների, ներառյալ Գնդեվազի բնակիչներից, և կհաստատվեն տեղի ճամբարում, շատ հնարավոր է, որ այդ աշխատողները նույնպես օգտվեն տրամադրվող ծառայություններից և հարմարություններից: Գնաճի ազդեցության տեսանկյունից, խոսքը վերաբերում է 400-770 աշխատողների, որոնք տեղական համայնքներ մուտք գործելու մեծ հնարավորություն կունենան: Դա կարող են լինել

աշխատողներ, որոնք բնակվում են համայնքներում, և կարող է անհրաժեշտություն առաջանալ օգտագործելու 370 հյուրանոցային սենյակ Ջերմուկում: Ուսումնասիրվող տարածքը ունի 6.678 հոգի բնակչություն, ինչը կարող է տեղական առևտրի ծավալը զգալիորեն մեծացնել և տեղական գների վրա որոշակի ազդեցություն ունենալ շինարարության ընթացքում:

Այս միտումը, ամենայն հավանականությամբ, կշարունակվի և կընդլայնվի գործողությունների ընթացքում, քանի որ մոտավորապես 195 տեղի աշխատողների (30%), ակնկալվում է, որ կաշխատեն Ծրագրում. Մնացած 462 աշխատողներից մոտավորապես 250-ը սպասվում է, որ կտեղավորվեն Ջերմուկի հյուրանոցում: Իսկ մնացածը աշխատողները, ակնկալվում է, որ կտեղափոխվեն իրենց ընտանիքների հետ Ծրագրի տարածք շահագործման տևողության ընթացքում: Խոսքը վերաբերում է մոտավորապես 250 միայնակ աշխատողների, որոնք կապրեն հյուրանոցում և առևտուր կանեն Ջերմուկում և ևս 210 ընտանիքների, որոնք ակնկալվում է, որ կբնակեղվեն Ծրագրի տարածքում (հավանական է Ջերմուկում, քանի որ այն ավելի մեծ չափսեր և, հետևաբար, վարձակալման հիմունքներով բնակեցման հնարավորություններ ունի): Ջերմուկում կան ավելի քան 2500 բնակելի տարածքներ, որոնցից մոտավորապես 30% -ը սովորաբար հանձնվում են վարձակալության արձակուրդների/հանգստի ժամանակահատվածներում: Այս բնակարանները, ընդհանուր առմամբ, չեն վերանորոգվել, 1960-ականներին դրանց կառուցումից հետո:

Ծրագրի աշխատողները կունենան ավելի բարձր տնօրինելի եկամուտ, քան սովորաբար ներկայում ընդունված է ունենալ գյուղական և քաղաքային համայնքներում, որտեղ գերիշխում է գոյատևման մակարդակի եկամուտը: Հնարավոր է, որ արդյունքում հանքի աշխատողները կարողանան ավելի բարձր գին վճարել կացարանի, սննդի, տրանսպորտի և այլ հիմնական ապրանքների դիմաց: Կախված նշված ապրանքների հասանելիությունից և տեղի առևտրականների արձագանքից՝ նման հավելյալ գնողունակությունը կարող է առաջացնել տեղայնացված ինֆլյացիա: Սա փոխկապակցված է Բաժին 6.11-ում նկարագրված «ռեսուրսների անեծք» երևույթի հետ:

Այն տնային տնտեսությունները, որոնք ունեն սեփական տներ և որոնց սպառողական զամբյուղը հիմնականում կախված է իրենց իսկ տնտեսությունից, ամենայն հավանականությամբ, պաշտպանված կլինեն գնաճային ազդեցությունից: Ավելի էական գնաճային ազդեցություններ պետք է ակնկալել Ջերմուկ քաղաքում, որտեղ դրամական միջոցներով եկամուտները և գործարքները գերակայում են, ինչը տնային տնտեսություններին ավելի խոցելի է դարձնում ապրանքների գների տատանումների նկատմամբ:

Ինֆլյացիան կարող է հատկապես ազդել այն ընտանիքների վրա, որտեղ ոչ մի անդամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն վարձված չէ Ծրագրի կողմից, բայց կախված է կանխիկի վրա հիմնված տնտեսությունից, քանի որ վարձակալում կամ գնում է անշարժ գույք, կամ էլ սննդամթերք: Այս խմբում ազդեցությունից ավելի շատ խոցելի կլինեն այն ընտանիքները, որոնք գլխավորում են կանայք, տարեց մարդիկ, կամ այն ընտանիքները, որտեղ չկան աշխատունակ տարիքի տղամարդիկ:

Տեղական գնաճի ազդեցությունների մեղմացման միջոցառումներ

Գնաճի բացասական ազդեցությունները դժվար է կանխատեսել: Լիդիան ընկերությունը ամսական կտրվածքով կիրականացնի առաջին անհրաժեշտության ապրանքների զամբյուղի գների մոնիթորինգ: Առաջին անհրաժեշտության ապրանքների զամբյուղը կսահմանվի հղում կատարելով Հայաստանում ՏՏԿԱՀ աղքատության հարցումներում կիրառվող «ապրանքների զամբյուղին»⁴: Վերջինս կկատարվի տեղական ազդեցության տարածքում, ինչպես նաև տարածաշրջանային ազդեցության տարածքի որոշ հատվածներում՝ նպատակ ունենալով որոշել, թե արդյոք ինֆլյացիան Ծրագրի հետ կապված տեղայնացված ազդեցություն է, թե ունի այլ հնարավոր դրդապատճառներ: Այս գնահատումը կկենտրոնանա Ջերմուկում ապրանքների արժեքի վրա, քանի որ դրանք հավանաբար առավելագույնս ենթակա են գնաճի պոտենցիալ ազդեցությանը:

Լիդիան ընկերությունը նաև կաշխատի զբոսաշրջային օպերատորների և Ջերմուկում հյուրանոցների սեփականատերերի հետ սենյակների վարձակալական այսիսի վճար սահմանելու համար, որը կաջակցի իրենց բիզնեսներին և քաղաքում զբոսաշրջիկների համար ահմանված սենյակների միջին գների վրա չափազանց մեծ ազդեցություն չի ունենա:

Հանքի աշխատողներին վճարվող աշխատավարձի մակարդակը հաճախ հիմնարար դեր է ունենում տեղայնացված գնաճային ճնշումների համար: Լիդիան ընկերությունը լայնածավալ համեմատական ուսումնասիրություններ է անցակցրել Հայաստանում՝ աշխատողների մեծամասնության դասակարգերի կտրվածքով աշխատավարձերի մակարդակը ըստ համարժեք պաշտոնի սահմանելու նպատակով: Ամուլսարի հանքի աշխատողների համար առաջարկված աշխատավարձերը համապատասխանեցվել են

⁴ <http://www.armstat.am/en/?nid=82&id=1716> հասանելի է 2015թ. դեկտեմբերից

Հայաստանյան նորմերին՝ այսպիսով նվազագույնի հասցնելով աշխատավարձերի հետ կապված գնաճը և ապահովելով, որպեսզի աշխատողները վճարվեն իրենց կատարած աշխատանքին համապատասխան: Համեմատական ուսումնասիրությունները կկրկնվեն յուրաքանչյուր տարի տվյալ հետևողականությունը պահպանելու համար:

Նույնիսկ այս դեպքում, երբ աշխատավարձերը համապատասխանեցվել են Հայաստանյան նորմերին, Ծրագրի ներկայացումը զգալիորեն կազդի տեղի աշխատավարձերի կառուցվածքի վրա (սկսած սահմանափակ պաշտոնական զբաղվածությամբ՝ հիմնականում գյուղատնտեսության վրա հիմնված տնտեսությունից, մինչև լրացուցիչ մոտ 657 մշտական աշխատատեղերով տնտեսություն՝ շահագործման փուլում): Այդ ազդեցության կառավարմանն աջակցելու նպատակով Լիդիան ընկերությունը կշարունակի աջակցել նաև տեղական ազդեցության տարածքում տեխնիկական ծրագրերի իրականացմանը: Այս ծրագրերը երկու նպատակ ունեն. խթանել արտադրությունը՝ բավարար առաջարկ ապահովելու և գյուղատնտեսական ապրանքների աճող պահանջարկը բավարարելու համար, ինչպես նաև բարելավել գյուղացիների և մշակների ծախսերի փոխհատուցում՝ հանքարդյունաբերական և ոչ-հանքարդյունաբերական ոլորտների միջև բացը նվազագույնի հասցնելու նպատակով:

Շահագործման փուլում, բնակարանների գների վրա հնարավոր ազդեցության մասշտաբները մասամբ կախված կլինեն այն բանից թե ինչ հաջողություն կունենա Ծրագրի կողմից ձեռնարկված տեղի բնակչության ներգրավումը/վարձումը: Բաժին 6.14-ում նկարագրված վերապատրաստման ծրագրերը թույլ կտան բարձրացնել տեղական համայնքի բնակիչների աշխատունակությունը, որպես այդպիսին, և բարձրացնել տեղական մակարդակով աշխատուժի ներգրավումը (թիրախային 30%): Լիդիան ընկերությունը կուսումնասիրի բնակարանների վաճառքի և վարձակալության գները Ջերմուկում: Վարձակալման գների զգալի փոփոխությունների դեպքում, Լիդիան ընկերությունը կաշխատի Ջերմուկի վարչական և համայնքային իշխանությունների հետ Ջերմուկի բնակիչների և բիզնեսների վրա այդ գնաճի ազդեցությունը հասկանալու և համայնքներում բնակեցման պլանավորման ընդլայնման հարցում աջակցել համար: Պոտենցիալ ազդեցությունները այս բնագավառում նկարագրված են Բաժին 6.12-ում:

Եթե նկատվի, որ գները շարունակում են բարձրանալ տեղական ազդեցության տարածքում, կամ գնաճի հարցը համայնքի բողոքարկման մեխանիզմների միջոցով բարձրացվել է որպես զգալի մտահոգություն արաջացնող խնդիր, ապա Լիդիան ընկերությունը կդիտարկի լրացուցիչ աջակցության հնարավորություն, որը կարող է իրենից ներկայացնել ազդեցության տարածքում թիրախային սոցիալական և ֆինանսական աջակցություն:

Հնարավոր է, որ ընկերությունը աջակցի փոքր արտադրողներին՝ պոտենցիալ գնորդների բացահայտման միջոցով շուկան նրանց համար ավելի հասանելի դարձնելով, կամ փոքր արտադրողների համար վերապատրաստման ծրագրեր մշակելով, ինչը թույլ կտա նրանց բարելավել իրենց գործարար հմտությունները, խթանել արտադրությունը և բարձրացնել արտադրանքի որակը: Նմանատիպ ծրագրերը եկամուտ ստանալու հնարավորությունների վրա կենտրոնացված լինելով հանդերձ, նաև նպաստում են տեղի համայնքների կտրվածքով գնաճի կառավարմանը:

Տեղական գնաճի մնացորդային ազդեցությունները

Հայաստանն ունի ազգային մակարդակով գնաճի էական տատանումների պատմություն: Ծրագիրը չի ազդի այդ ազգային միտումների վրա, տեղական մակարդակով հնարավոր ազդեցությունն առկա է նման համատեքստով ծրագրերում, որտեղ բարձր աշխատավարձով զբաղվածության աճը բերում է առաջին անհրաժեշտության կարևոր ապրանքների և կացարանների գների աճի: Նախքան ազդեցությունների մեղմացման միջոցառումների իրականացումը, այս ազդեցությունը համարվում է չափավոր (բացասական): Լիդիան ընկերությունը կփորձի մեղմացնել այդ ազդեցությունը տեղի բնակչությանը աշխատանքի վարձելով, ժամանակավոր շինարական ճամբարի (550-920 տեղի հնարավորությամբ) և գյուղատնտեսության ոլորտների արտադրողականության բարձրացմանն ուղղված տեխնիկական աջակցության տրամադրման միջոցով, ինչը կօգնի պահպանել առաջին անհրաժեշտության ապրանքների մատակարարումը՝ նվազեցնելով հետագայում կտրուկ գնաճի հավանականությունը: Այդ ազդեցությունը մասնավորապես կզգան այն տնային տնտեսությունները, որոնք մեծամասամբ կախված են վաճառվող ապրանքներից և վարձակալության տրվող բնակարաններից: Նշված ծրագրի իրականացման շնորհիվ մնացորդային տեղական մակարդակով գնաճի ազդեցությունները կլինեն չափավոր (բացասական)՝ տեղական ազդեցության տարածքի բնակիչների կյանքի որակը վատացնելու հնարավորությամբ:

Աղյուսակ 6.13.5 Ազդեցության վերլուծություն, տեղական գնաճ						
Ենթադաս	Ուղղություն	Ուժգնություն	Մակարդակ	Տևողություն	Ազդեցություն (առաջ)	Ազդեցություն (հետո)
Տեղական գնաճ	Բացասական	Չափավոր	Տեղական	Միջնա-ժամկետ	Չափավոր (բացասական)	Չափավոր (բացասական)

6.13.4 Տեղական հողի վարձակալության և վճարների ավելացում

Հողի վարձակալության վճարների վրա ազդեցություն ունեցող Ծրագրի գործողությունները

Մինչև 2014թ.-ը ընկերությունը Գորայք, Սարավան և Գնդեվազ գյուղական համայնքներից վարձակալել է երկու տեսակի հողատարածք՝ հետախուզական աշխատանքների լիցենզավորված տարածք, որն ունի գյուղատնտեսական հողօգտագործման կատեգորիա, և ապարների տեղաբաշխման հողատարածք, որը փոխակերպվել է արդյունաբերական օգտագործման կատեգորիայի: Հողի հարկը հաշվարկվում է կառավարության որոշման համաձայն՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր հողի տեսակի զուտ եկամտի հնարավորության կադաստրային գնահատումը, և համաձայնեցվում է ստացող մարմնի հետ, որն այս դեպքում համայնքային կառավարման մարմինն է:

2012 թ.-ին Լիդիան ընկերությունը իրավունք ստացավ պաշտոնապես փոփոխության ենթարկելու այն հողերի հողատեսքը, որոնք նախկինում վարձակալվել են որպես գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդերքօգտագործման և արտադրական կարգավիճակ ունեցող հողեր: 2013 թ.-ին ապարների տեղաբաշխման տարածքում վարձակալած հողերի մեծ մասը գրանցվեց որպես արդյունաբերական օգտագործման դասակարգ ունեցող հող, ինչը էապես ազդեց վարձավճարների վրա, որոնք զգալիորեն աճեցին:

Համայնքների հասարակական համախմբման գործընթացը, որը ներկայումս ծավալվում է Հայաստանում, էական ազդեցություն կունենա տեղական քաղաքական և վարչական կառուցվածքի վրա, ինչն էլ, իր հերթին, կանդրադառնա նրանց վրա, ովքեր Ամուլսարի Ծրագրից հողի վարձակալության դիմաց վճարներ են ստանում: Սույն ԲՄԱԳ-ի ավարտական փուլում համախմբման մանրամասները չէին հաստատվել, սակայն սպասվում է, որ Գնդեվազը արդյունավետ կերպով կդառնա «կրտսեր» գործընկեր Ջերմուկի խոշոր համայնքներում:

Հողի վարձակալության վճարների վրա հնարավոր ազդեցությունները


Ինչպես նկարագրված է Գլուխ 2-ում, Հողային օրենսգրքի համաձայն, հողի վարձակալության դիմաց գումարը վճարվում է անմիջապես գյուղական համայնքներին, որը հաճախ համայնքի վարչական ապարատի եկամտի կարևորագույն աղբյուրներից մեկն է հանդիսանում: Համայնքային ավագանու խորհուրդը և համայնքի ղեկավարը (ուր հաճախ ներկայացնում են որպես գյուղապետ) ընտրվում են չորս տարի ժամկետով, հետևաբար համայնքը կարող է ընտրական գործընթացի միջոցով ազդել համայնքի կառավարման մարմնի կողմից կայացվող ներդրումների հետ կախված որոշումների վրա:

Երեք գյուղական համայնքներին Ծրագրի կողմից 2014թ. վճարման ենթակա հողի վարձակալության վճարները համառոտ ներկայացված են Աղյուսակ 6.13.7-ում: 2015թ.


վարձակալած ողջ հողատարածքը դասակարգվել է որպես “արդյունաբերական” նշանակության հողատարածք, բացառությամբ Գնդեվազում գտնվող 621.3 հեկտար հողատարածքի (դասակարգված է որպես գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողատարածք):

Աղյուսակ 6.13.6. Գյուղական համայնքներին վճարվող տարեկան հողի հարկերը (2015թ.)			
	Գյուղական համայնք		
	Գորայք	Գնդեվազ	Սարավան
Վարձակալված հեկտարների քանակը	245.2	946.6	1,102.7
Տարեկան գումարը (ՀՀԴ-ով)	177 156 668	57 986 155	188 433 163
Գումարը (ԱՄՆ դոլարով)	\$369 076	\$120 804	\$392 569


Վարձակալության վճարը գանձվում է գյուղական համայնքների կողմից և օգտագործվում համայնքային ծրագրերի համար՝ համայնքային կառավարման մարմնի կողմից սահմանված կարգով: Մա երևում է ստորև բերված թվերում, որոնք ցույց են տալիս Լիդիան ընկերության կողմից կատարվող հողի հարկի վճարները գյուղական համայնքներին:



Գծապատկեր 6.13.3 Լիգիան ընկերության կողմից վճարված Գորայքի հողի հարկը (ԱՄՆ դոլար)⁵



Գծապատկեր 6.13.4. Լիգիան ընկերության կողմից վճարված Սարավանի հողի հարկը (ԱՄՆ դոլար)



Գծապատկեր 6.13.5. Լիգիան ընկերության կողմից վճարված Գնդեվազի հողի հարկը (ԱՄՆ դոլար)

Հայաստանի օրենսդրության համաձայն, գոյություն չունի այնպիսի դրույթ կամ իրավական ակտ, ըստ որի տեղական ինքնակառավարման մարմինները կարող են

⁵ ԱՄՆ դոլարի արժեքները հողի վարձակալման գնի համար կրճատվել են 2014թ-2015թ, ինչը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի փոփոխություններով:

հանքարդյունաբերությունից որևէ ուրիշ եկամուտ ստանալ (ուղղակի կամ անուղղակի փոխանցումների միջոցով): Թեև հողի վարձակալման վճարները գյուղական համայնքների եկամուտները զգալիորեն ավելացնում են (4-ից 40 անգամ գերազանցելով պետական միջոցները), բացարձակ առումով դրանք համայնքը կառավարելու համար համեմատաբար համեստ միջոցներ են: Նմանապես, հանքի փակման հետ կապված հողի վարձակալման վճարների դադարեցումը կմեղմացվի համեմատաբար չափավոր գումարների վճարմամբ:

Համայնքային կառավարման մարմիններն ավելի խոշոր բյուջեների կառավարման առումով լրացուցիչ աջակցության կարիք կունենան: Առանց այդ աջակցության առկա է ռիսկը, որ եկամուտը կարող է սխալ նպատակներով ծախսվել կամ ոչ արդյունավետ կառավարվել և/կամ առաջացնել բախում կառավարման այլ մարմինների հետ, որոնք չունեն հարկահավաքի ծավալների ավելացում:

Հողի վարձակալության վճարների վրա ազդեցությունների մեղմացման միջոցառումները

Հողատարածքի վարձակալության վճարի ավելացումը դրական արդյունք է հողատարածքը վարձակալության հանձնող համայնքների համար: Հողօգտագործման տարբեր դասակարգումներին անցումը զգալիորեն ավելացրել է գյուղական համայնքների եկամուտները: Այնուամենայնիվ, վարձակալության վճարների ավելացումների միջև անհավասարությունը նշանակում է, որ գյուղական համայնքներից երկուսը (Գորայքը և Սարավանը) կունենան դրամական միջոցների նկատելի ներհոսք՝ երրորդի (Գնդեվազ) համեմատ: Այդ անհավասարությունը սակայն կնվազի Գնդեվազում հողի գնման գործընթացի հետ կապված, քանի որ այն տարբեր կերպ կազդի տվյալ տնտեսությունների վրա (առավելապես մասնավոր հողատարածքների վաճառքի միջոցով): Համայնքային համախմբման գործընթացի ազդեցությունը Գնդեվազի շահառուների (հողի վարձակալման վճարներից շահույթ ստացողների) վրա դեռևս հայտնի չէ, սակայն կարող է թուլացնել գյուղական համայնքների վերահսկողությունը դրամական միջոցների նկատմամբ:

Այն իրավիճակներում, երբ ակնկալվում է, որ փոքր համայնքները և տեղական կառավարման մարմինները ստանալու են (կամ արդեն սկսել են ստանալ) զգալի եկամուտ հանքարդյունաբերական ծրագրերից, խորհուրդ է տրվում եկամուտների կառավարման ծրագիր իրականացնել տվյալ կառավարման մարմինների հետ՝ նրանց համար թափանցիկության, հաշվետվողականության եւ բյուջետային պլանավորման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ կազմակերպելով: ՄՖԿ-ի Եկամուտների Կառավարման փորձագետ է այցելել Ամուլսարի Ծրագրի տեղամաս՝ իրավիճակը գնահատելու և Ծրագրին այդ ազդեցությունը կառավարելու ուղղություն ցույց տալու

նպատակով: Հաշվի առնելով հողի վարձակալության վճարների համեմատաբար համեստ մակարդակը և համայնքային ինքնակառավարման մարմինների կառուցվածքում փոփոխությունների հնարավորությունը՝ փորձագետը խորհուրդ չի տալիս մշակել եկամուտների կառավարման չափազանց հավակնոտ ծրագիր⁶:

2013թ. Լիդիան ընկերությունը աջակցել է չորս համայնքների ղեկավարների համար ֆինանսական կարողությունների զարգացմանն ուղղված ուսուցողական դասընթացների կազմակերպմանը: Այս աջակցությունը հետագայում շարունակելու նպատակով Լիդիան ընկերությունը կկենտրոնանա համայնքային կառավարման մարմինների հասանելիությունը ապահովելու վրա, որպեսզի նրանք ունենան “ձայն” և լինեն այնպիսի դիրքում, որը նրանց թույլ կտա արդյունավետ աշխատել համախմբված տեղական կառավարման կառուցվածքի պայմաններում: Գոծողությունները հետևյալն են. զարգացնել համայնքների կառավարման մարմինների կարողությունները՝ նրանց իրազեկման մակարդակը բարձրացնելու և հետևյալ ուղղություններով վերապատրաստելու միջոցով (օրինակ՝ բյուջետային խնդիրներ, համապատասխան օրենքներ և կանոնակարգեր), ինչպես նաև համայնքներին համախմբման ընթացքի վերաբերյալ ինֆորմացիա տրամադրել: Դա պետք է նախաձեռնվի Կառավարության և համախմբման գործընթացը իրականացնող դոնոր կազմակերպությունների սերտ համագործակցության միջոցով: Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության հնարավորություններ կփնտրվեն:

Հողի վարձակալման վճարներից բացի, տվյալ համայնքները ստանում են նաև Լիդիան ընկերության կողմից ներդրումներ համայնքների զարգացման ծրագրերի շրջանակներում: Վերջին ժամանակներում այդ համայնքների եկամուտների մակարդակի բարձրացումը հողի վարձակալման վճարների շնորհիվ հավելյալ հնարավորություններ կստեղծի դրանց համար՝ թույլ տալով իրականացնել միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, ինչպես նաև Լիդիան ընկերության հետ համատեղ ներդրումներ կատարել համայնքների կարիքները հոգալու համար: Լիդիան ընկերության համայնքների զարգացման թիմը

⁶ Այս առաջարկությունը հիմնված է հետևյալ հաշվարկների վրա 1) ստացված գումարները, թեև կարևոր են տեղական ինքնակառավարման մարմինների համար, սակայն համեմատաբար փոքր են, և չի ակնկալվում, որ դրանք կարող են զգալիորեն գերազանցել իրենց ներկա մակարդակը, 2) տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունները ավելի քիչ են, քան այլ երկրներում, և 3) մոտ ապագայում տեղական իշխանությունների «խմբավորման» գործընթացը. Առաջին երկու կետերը նշանակում են, որ, ամենայն հավանականությամբ, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կարողությունների զգալիորեն զարգացման ծրագիրը երաշխավորելու նպատակով ոչ մի լուրջ ներդրումներ չեն լինի: Երրորդ, ցանկացած քայլ անելիս, պետք է հաշվի առնել առաջիկա փոփոխությունները:

սերտորեն կհամագործակցի համայնքների կառավարման մարմինների հետ՝ միջնաժամկետից երկարաժամկետ ֆինանսավորման և ծրագրերի առաջնահերթության սահմանման շուրջ:

Հողի վարձակալության վճարների վրա մնացորդային ազդեցությունները

Հաշվի առնելով վերոնշյալ միջոցառումները և գործողությունները, որոնց միջոցով շահառուներին կտրամադրվի հստակ տեղեկատվություն գյուղական տեղական բյուջեների փոփոխությունների վերաբերյալ, հողի վճարները կբերեն ներկա իրավիճակի որոշակի բարելավման: Կիրառելով ֆինանսական կառավարման միջնաժամկետ միջոցառումներ՝ նշված եկամուտները կարող են օգտագործվել համայնքային կառավարման մարմինների կողմից՝ իրենց համայնքների ներկա խնդիրները լուծելու նպատակով: Այդ հողի վճարների մնացորդային ազդեցությունները զգալիորեն կփոփոխվեն համայնքային համախմբման հետ կապված փոփոխություններից (դեռևս ճշտագրուման կարիք ունեն):

Աղյուսակ 6.13.7. Ազդեցության վերլուծություն, հողի վարձակալություն վճարներ						
Ենթադաս	Ուղղություն	Ուժգնություն	Մակարդակ	Տևողություն	Ազդեցություն (առաջ)	Ազդեցություն (հետո)
Տեղական հարկեր և հողի վճարներ	Դրական	Միջին	Տեղական	Միջնա-ժամկետ	Մեղմ (դրական)	Մեղմ (դրական)

Աղյուսակ 6.13.9.-ում համառոտ ներկայացվում են տնտեսության վրա Ծրագրի ազդեցությունները:

Աղյուսակ 6.13.8. Տնտեսության վրա ազդեցությունների համառոտ նկարագրությունը						
Ենթադաս	Ուղղություն	Ուժգնություն	Մակարդակ	Տևողություն	Ազդեցություն (առաջ)	Ազդեցություն (հետո)
Մակրոտնտեսական ազդեցություններ	Դրական	Խոշոր	Ազգային	Միջնա-ժամկետ	Մեղմ (դրական)	Խոշոր (դրական)
Տեղական ինֆլյացիա	Բացասական	Մեղմ	Տեղական	Միջնա-ժամկետ	Մեղմ (բացասական)	Մեղմ (բացասական)
Հողի	Դրական	Մեղմ	Տեղական	Միջնա-	Մեղմ	Մեղմ

վարձակալման վճարներ				Ժամկետ	(դրական)	(դրական)
------------------------	--	--	--	--------	----------	----------

6.13.5 Մոնիտորինգ և վերահսկում

Ինչպես նշվել է վերևում, Ծրագրի տնտեսական ազդեցությունների կառավարման հետ կապված մեղմացման միջոցառումները կարտացոլվեն մի շարք կառավարման պլաններում: Աղյուսակ 6.13.10.-ում ընդհանուր նկարագրվում են մոնիտորինգի ցուցանիշները, որոնք կօգտագործվեն և կկատարելագործվեն՝ ազդեցությունների մեղմացման միջոցառումների արդյունավետությունը գնահատելու նպատակով:

Աղյուսակ 6.13.9. Ազդեցությունների մեղմացման միջոցառումների՝ աղյուսակի տեսքով համառոտ նկարագրությունը			
Բաժին	Ազդեցության մեղմացման միջոցառում	Մոնիտորինգի ցուցանիշ	Կառավարման պլան
6.13.1 Մակրոտնտեսական ազդեցություններ	Լիդիան ընկերությունը բոլոր հարկերի, ընդերքօգտագործման վճարների և պետական վճարումների վերաբերյալ հաշվետվության առումով կկատարի ՄՖԿ-ի պահանջները: Այդ հաշվետվողականությունը ներառված է ԱԱԹՆ-ի շրջանակներում և ՄՖԿ-ի կողմից պահանջվում է արդյունահանող արդյունաբերության նոր ծրագրերից: Ծրագիրը առաջնային է համարում նաև տեղական գնումները Ծրագրի մակրոտնտեսական ներդրումը բարձրացնելու հարցում:	<ul style="list-style-type: none"> • Տարեկան կտրվածքով ընդերքօգտագործման վճարների, հարկերի և շահութաբաժինների վերաբերյալ հաշվետվություն: • Հայաստանի կողմից հանձնառած գնումների մասնաբաժինը 	Բնապահպանական և սոցիալական Կառավարման Պլան
6.13.2 Ներդրում տեղական տնտեսությանը	Տես՝ Աղյուսակ 6.21.2 Ազդեցությունների մեղմացման միջոցառումների համառոտ նկարագրությունը		
6.13.3 Բնֆյազիա	Լիդիան ընկերությունն ամսական կտրվածքով կիրականացնի առաջին անհրաժեշտության ապրանքների զամբյուղի գների մոնիթորինգ: Վերջինս կկատարվի հիմնականում Ջերմուկ, ինչպես նաև տարածաշրջանային ազդեցության տարածքի որոշ հատվածներում՝ նպատակ ունենալով որոշել, թե արդյոք գնաճը Ծրագրի հետ կապված տեղայնացված ազդեցություն է, թե ունի այլ հնարավոր դրդապատճառներ: Լիդիան ընկերությունը նաև կաշխատի զբոսաշրջային օպերատորների և Ջերմուկում հյուրանոցների սեփականատերերի հետ սենյակների վարձակալական այպիսի վճար	<ul style="list-style-type: none"> • Եռամսյակային կտրվածքով ապրանքների զամբյուղի հատկորոշում և գների վերահսկում: • Հյուրանոցային սենյակների և բնակարանների գները (վաճառքի և վարձակալման) Ջերմուկ • Հանքարդյունաբերական ընկերությունում ստանդարտ պաշտոնների համար նախատեսված աշխատավարձի մակարդակը: • Գյուղատնտեսության արտադրողականության և տնտեսական փոխհատուցման (փոքրածավալ հարցում) 	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան Մարդկային ռեսուրսների կառավարման պլան

Աղյուսակ 6.13.9. Ազդեցությունների մեղմացման միջոցառումների՝ աղյուսակի տեսքով համառոտ նկարագրությունը			
Բաժին	Ազդեցության մեղմացման միջոցառում	Մոնիտորինգի ցուցանիշ	Կառավարման պլան
	<p>սահմանելու համար, որը կաջակցի իրենց բիզնեսներին և քաղաքում զբոսաշրջիկների համար ահմանված սենյակների միջին գների վրա չափազանց մեծ ազդեցություն չի ունենա:</p> <p>Լիդիան ընկերությունը կիրականացնի իր աշխատակազմին վճարվող աշխատավարձի մակարդակի մոնիթորինգ տարեկան կտրվածքով՝ նպատակ ունենալով որոշել, թե արդյոք այն աշխատանքի շուկայում գնաճի պատճառ չի դառնում:</p> <p>Լիդիան ընկերությունը կուսումնասիրի բնակարանների գները (վաճառքի և վարձակալման) Ջերմուկ քաղաքում և Գնդեվազ համայնքում բնակարանային շուկայում հնարավոր ազդեցությունները գնահատելու համար: Անհրաժեշտության դեպքում Ընկերությունը կօժանդակի գյուղական համայնքի ղեկավարներին ընդլայնման հարցում:</p> <p>Լիդիան ընկերությունը կաջակցի գյուղատնտեսական տեխնիկական օգնության ծրագրերի իրականացմանը՝ ոլորտում առաջարկը ավելացնելու և տեղական արտադրողների ծախսերի փոխհատուցումը խթանելու նպատակով: Եթե նկատվի, որ գները դեռ շարունակում են բարձրանալ տեղական ազդեցության տարածքում,</p>	<p>կես տարին մեկ կատարվող վերլուծությունը ազդակիր համայնքներում:</p> <ul style="list-style-type: none"> • Փոքր արտադրողներին տրամադրվող նպատակային տնտեսական աջակցության արդյունքների վերահսկում: 	

Աղյուսակ 6.13.9. Ազդեցությունների մեղմացման միջոցառումների՝ աղյուսակի տեսքով համառոտ նկարագրությունը			
Բաժին	Ազդեցության մեղմացման միջոցառում	Մոնիտորինգի ցուցանիշ	Կառավարման պլան
	ապա Գեոթիմը կդիտարկի լրացուցիչ տեխնիկական աջակցության հնարավորություն՝ մասնավորապես, շուկաները արտադրողներին ավելի հասանելի դարձնելով և փոքր արտադրողների համար գործարար հմտությունների դասընթացներ կազմակենսակցելով:		
6.13.4 Հողի վարձակալության վճարների և հողի վճարների ազդեցությունները	Լիդիան ընկերությունը կշարունակի նպաստել համայնքների կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը՝ տրամադրելով նրանց միջնաժամկետ ֆինանսավորում և կառավարելով համախմբման գործընթացը:	<ul style="list-style-type: none"> Վերապատրաստման դասընթացներ համայնքի կառավարման մարմինների համար: Լիդիան ընկերության և համայնքների համատեղ ներդրումների մակարդակը համայնքների առաջնահերթ կարևորություն ունեցող ծրագրերում: 	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան, Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան

6.13.6 Եզրակացություններ

Հանքի շինարարության, շահագործման և փակման հետևանքով էկոնոմիկայի վրա ազդեցության գնահատման նպատակով՝ իրականացվել է ազդեցությունների գնահատում, որի արդյունքները համառոտ ներկայացված են ստորև:

- Ազդեցությունները դասակարգվում են չորս հիմնական խմբերի՝ մակրոտնտեսություն (ներառյալ ընդերքօգտագործման վճարները, հարկերը և շահութաբաժինները), ներդրում տեղական տնտեսությանը, տեղական գնաձ, հողի վարձակալման վճարներ: Բոլոր նշված ազդեցություններն ակնկալվում են Ծրագրի շինարարության և շահագործման փուլերի ընթացքում՝ միջնաժամկետ կտրվածքով:
- Մակրոտնտեսական ազդեցությունները մեղմացման միջոցառումների իրականացումից առաջ հավանական է ունենան միջին դրական ազդեցություն, իսկ դրանից հետո՝ խոշոր դրական ազդեցություն: Մակրոտնտեսական ազդեցությունների մեղմացման միջոցառումները կենտրոնացած են ֆինանսական գործարքների թափանցիկության և հաշվետվողականության վրա: Ազգային մակարդակում սա կներառի ԱԱԹՆ-ի չափորոշիչներին համապատասխան իրազեկում և հաշվետվողականություն:
- Ակնկալվում է, որ Ծրագրի ներդրումը տեղական տնտեսությանը կդիտարկվի որպես դրական տնտեսական ներդրում (Հատուկ ծանոթագրություն. այս ներդրման սոցիալական ազդեցությունները քննարկվում են սույն ԲՄԱԳ-ի այլ մասերում) այնքան ժամանակ, քանի դեռ այն կպահպանվի մի մակարդակի վրա, որը դուրս չի մղի գոյություն ունեցող զբոսաշրջության ակտիվությունը:
- Տեղական գնաձը չափավոր բացասական ազդեցություն կունենա նախքան մեղմացման միջոցառումների իրականացումը, և այդ չափավոր բացասական ազդեցությունը կմնա նաև մեղմացման միջոցառումներից հետո: Ազդեցությունների մեղմացման միջոցառումները ընդգրկված են Ծրագրի նախագծում (աշխատավարձի մակարդակի քննարկման և կացարանների պլանավորման միջոցով) և գյուղատնտեսական տեխնիկական աջակցության ծրագրերում, որոնք ուղղված են փոքր արտադրողների արտադրողականության և տնտեսական փոխհատուցման խթանմանը:
Հողի վարձակալության վճարների ազդեցությունները կարող են տարբեր լինել՝ կախված համայնքային համախմբման ընթացքից: Ներկայիս վարչական կառուցվածքի պայմաններում դրանք կարող են ունենալ միջին դրական ազդեցություն թե՛ մեղմացման միջոցառումների իրականացումից առաջ և թե՛ դրանցից հետո: